ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ

1979 – 1989 ԹԹ. ԱՖՂԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (ԳԼՈԲԱԼ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈԿԱԼ ԿԻՉԱԿԵՏԸ)

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր ***Ա. Ա. Ստեփանյան***

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բ.գ.դ., պրոֆեսոր ***Գ. Մ. Քեոյան***
պ.գ.թ, դոցենտ ***Կ. Յ. Գասպարյան***

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում գործող ԲԿԳԿ-ի «Համաշխարհային պատմություն» 069 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, Երևան, Աբովյան փողոց, 52):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գրադարան-ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2026 թ. նոյեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի

Գիտական քարտուղար՝ ***պ.գ.թ., դոցենտ***
Սմբատ Հովհաննիսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Սառը պատերազմի ընթացքում միջազգային հարաբերությունները դադարեցին լինել միայն եվրոպակենտրոն, և գերտերությունների մրցակցությունը տեղափոխվեց «երրորդ աշխարհ»: 1979-1989 թթ. Աֆղանական պատերազմն այդ մրցակցության խոշորագույն լոկալ հակամարտություններից մեկն էր: Այն ցույց տվեց ինչպես գերտերությունների զսպման և դիմակայության հնարավորությունների սահմանները, այնպես էլ աֆղանական հասարակության կառուցվածքին խորթ մոդել պարտադրելու փորձի ձախողումը: Պատերազմի ընթացքում և դրանից հետո ձևավորված գործընթացները՝ կրոնական ծայրահեղականությունը, զինված ցանցերը, թմրանյութերի և զենքի ապօրինի շրջանառությունը, փախստականների հոսքերը, շարունակում են ազդել Կենտրոնական և Հարավային Ասիայի, այդ թվում՝ Հարավային Կովկասի անվտանգության վրա:

Աֆղանական ներհանրութենական բաժանարար գծերը և էթնիկական տարասեռությունը հիմքեր ձևավորեցին արտաքին ուժերի միջամտության և (ազդեցության փորձերի ձախողման պարագայում) ռազմական միջամտության համար: Մեր ատենախոսության թեմայի արդիականության տեսանկյունից կարևորել ենք հետևյալ գործոնները՝

- ժամանակակից Աֆղանստանում ազգային-էթնիկական բնույթի հիմնախնդիրները բազմաթիվ ու բազմազան են և անմիջականորեն ազդում են ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների վրա: Աֆղանական էթնո-քաղաքական գործընթացներում այսօր էլ առկա են հակամարտությունների նոր հնարավորություններ:
- Խորհրդային զորքերի մուտքն Աֆղանստան և դրա շուրջ ընթացող գործընթացները հնարավորություն են ընձեռում դիտարկելու նաև հետսառըպատերազմյան հակամարտությունները՝ ընդհուպ մինչև ուկրաինական ճգնաժամը: Հակամարտող կողմերի մարտավարական և ռազմավարական ձախողումներում ակնհայտ է աֆղանական փորձի կրկնությունը:
- Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերումից և Ժնևյան համաձայնագրերի ստորագրումից անցել է ավելի քան երեք տասնամյակ, սակայն աֆղանական իրականությունը հեռու է կայունությունից, ավելին՝ արտաքին ուժերին դիմակայման կրոնական մեխանիզմները փոխակերպվել են և դարձան միջազգային ահաբեկչական գործելակերպ: Այդուհանդերձ Աֆղանստանում և նրա շուրջ ընթացող գործընթացներում հստակ ուրվագծվում են նախորդ հակամարտային փորձերը և հակամարտածին ճիգերը, տրանսֆորմացիոն խաղաղեցման միջոցառումների հեռանկարները:
- Աֆղանական պատերազմի իրադարձութենական փոխակերպումները և դրանց դասերը կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնասիական քաղաքականության և տարածաշրջանային

պետությունների հետ հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Ի մասնավորի, կարևոր է հաշվառել տարածաշրջանի ուժերի փոխհարաբերությունը, տնտեսական–քաղաքական զարգացումները, միգրացիոն հոսքերը, կրոնական արմատականությունը ու դրանցից արտածվող առկա և հնարավոր ազդեցությունները Հարավային Կովկասում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Այն ընդգրկում է Աֆղանական պատերազմի ընթացքը՝ 1979-1989 թվականները, սակայն հետազոտության պատմաքաղաքական արդյունքների ամբողջացման նպատակով ակնարկային քննության ենք ենթարկել Աֆղանստանի պատմական զարգացման առանձին դիտանկյունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության ***օբյեկտը*** 1979–1989 թվականների Աֆղանական պատերազմն է՝ որպես Սառը պատերազմի լոկալ հակամարտություն, որի ընթացքում խաչվեցին աֆղանական հասարակության ներքին հակասությունները, գերտերությունների և տարածաշրջանային ուժերի շահերը:

Վերոնշյալ ժամանակագրական մոտեցմամբ որոշարկվել է հետազոտության ***առարկան***՝ Աֆղանական պատերազմի միջազգային և ներքաղաքական դիտանկյունները: Ընդհանրական ուսումնասիրության է ենթարկվել Աֆղանստանի էթնոքաղաքական զարգացման առանձնահատկությունները, աֆղանական հասարակության կենտրոն-ծայրամաս կառուցվածքը, գերտերությունների, տարածաշրջանային ուժերի և կրոնական կազմակերպությունների «ազդեցություն-հակազդեցություն» փոխհարաբերությունները, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի զինծառայողների մասնակցությունը և նրանց մարտական փորձառության փոխակերպումը Արցախյան առաջին պատերազմում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության ***նպատակն*** է հնարավորինս ամբողջական ուսումնասիրության ենթարկել Աֆղանական պատերազմի՝ որպես Սառը պատերազմի լոկալ հակամարտության առանձնահատկությունները, բացատրել աֆղանական հասարակության պատմական և կառուցվածքային գործոնների, գերտերությունների ու տարածաշրջանային ուժերի փոխազդեցության դերը հակամարտության ընթացքում և խորհրդային քաղաքականության ձախողման մեջ, ինչպես նաև պարզել աֆղանական մարտական փորձառության փոխակերպումը:

Ատենախոսության նախանշված նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ ***խնդիրները.***

1. Բացահայտել աֆղանական պետականության ձևավորման և արդիականացման փուլերը 19-րդ դարից մինչև 1978 թվականը, նրանց ներքին և արտաքին պայմանները և «կենտրոն-ծայրամաս» հարաբերությունների կրկնվող օրինաչափությունը:

2. Վերհանել Աֆղանստանի էթնիկական և կրոնական տարասեռության դերը արտաքին և ներքին քաղաքական գործընթացներում և իսլամական արմատական շարժումների ձևավորումը:
3. Ուսումնասիրել 1950–1970-ական թվականների աֆղանական քաղաքական ուժերի (ԱԺԴԿ, իսլամական և ազգային կուսակցություններ) ձևավորումը և Դաուդի վարչակարգի քաղաքականությունը:
4. Ներկայացնել Սառը պատերազմի ձևավորումը և երկբևեռ համակարգի առանձնահատկությունները, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ ռազմավարությունները՝ ներառյալ ԽՍՀՄ արտաքին քաղաքականության գաղափարական հիմքերը և երրորդ աշխարհում ազդեցության գործիքները:
5. Բացահայտել Աֆղանստանի աշխարհաքաղաքական նշանակությունը, ԽՍՀՄ արտաքին քաղաքականության ռազմավարական և մարտավարական դիտանկյունները, ինչպես նաև Երրորդ աշխարհի երկրներում (հատկապես Աֆղանստանում) խորհրդային ազդեցության գործիքակազմը:
6. Բացահայտել 1978 թվականի ապրիլյան հեղափոխության (սաուրյան հեղափոխություն) պատճառները, ԱԺԴԿ-ի իշխանության քաղաքականության առանձնահատկությունները և խորհրդային զորքերի մուտքի, ռազմական ներկայության գործոնի ազդեցությունը ամբողջ տարածաշրջանի վրա:
7. Ներկայացնել պատերազմի ընթացքը (փուլերը, կորուստները) և կոմունիստական վարչակարգերի (Քարմալ, Նաջիբուլլահ) արտաքին և ներաֆղանական քաղաքականությունը:
8. Վերլուծել աֆղանական ընդդիմության (մոջահեդների) կազմը և արտաքին օժանդակության աղբյուրները, չափերը և դերը (ԱՄՆ, Պակիստան, Սաուդյան Արաբիա, Չինաստան, Իրան):
9. Բացահայտել խորհրդային ռազմավարության փոփոխության պատճառները, Ժնևյան համաձայնագրերի բովանդակությունը և խորհրդային զորքերի դուրսբերման որոշման հետևանքները, ինչպես նաև կիրառել Ս. Ռոկկանի «կենտրոն-ծայրամաս» տիպաբանությունը (հաշվի առնելով նրա եվրոպական ծագումը) և բացատրել խորհրդային քաղաքականության ձախողման պատճառները:
10. Վերլուծել խորհրդային Հայաստանից Աֆղանական պատերազմին մասնակցության քանակական բնութագրերը (զորակոչ, կորուստներ) և հայ զինծառայողների ծառայության փորձառությունը:

Հետազոտության մեթոդաբանությունը և մեթոդները: Ատենախոսության նյութը շարադրելիս օգտագործել ենք ժամանակակից պատմագիտությանը բնորոշ տեսական, աղբյուրագիտական մեթոդներ և մոտեցումներ: Առավելությունը տրվել է պատմաքննական և պատմահամադրական վերլուծության մեթոդների կիրառմանը՝ համադրված օբյեկտիվության

սկզբունքներով: Պատմահամեմատական և պատմահամադրական մեթոդների կիրարկմամբ փորձել ենք ուսումնասիրել Աֆղանստանում ներքաղաքական և հակամարտային գործընթացների տեղական և միջազգային դիտանկյունները՝ զուգահեռելով տարբեր ժամանակաշրջանների համանման իրադարձությունների հետ: Ատենախոսությունը գրելիս կարևորել ենք նաև հարակից օժանդակ գիտակարգերի ընձեռած արդյունքները: Ըստ այս միջգիտակարգային մոտեցման՝ համադրվել են քաղաքագիտության, աշխարհաքաղաքականության, միջազգային հարաբերությունների և այլ գիտակարգերի ձեռքբերումները:

Աֆղանական հասարակության և խորհրդային քաղաքականության վերլուծության համար որպես բացատրական շրջանակ օգտագործվել է Ս. Ռոկկանի «կենտրոն-ծայրամաս» մոդելը (կենտրոնների մոնոցեֆալ/պոլիցեֆալ տիպաբանություն)՝ հաշվի առնելով դրա եվրոպական ծագումը և ոչ եվրոպական, պատրիմոնիալ հասարակության նկատմամբ կիրառման սահմանափակումները: Աֆղանական պատերազմի հայ մասնակիցների փորձառությունը վերլուծվել է Պ. Բուրդիեի «դաշտի տեսության» և Հ. Ուիլքինսոնի «մարտական կապիտալի» հայեցակարգի շրջանակում: Քանակական պատկերը վերակառուցվել է արխիվային ցուցակների, վետերանական կազմակերպությունների տվյալների և բաց աղբյուրների համադրմամբ:

Հետազոտական հարցադրումներ.

Ատենախոսության գիտական հիմնավորման, նպատակ-խնդիրների տրամաբանական համամասնության ձևավորման նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ հետազոտական հարցադրումները՝

1. Ինչպիսի՞ պատմաքաղաքական միջավայրի, արտաքին և ներքին քաղաքական ու քաղաքակրթական գործընթացների համածիրում ձևավորվեց և փոխակերպումներ ապրեց աֆղանական պետությունն ու հանրույթը:
2. Ինչպիսի՞ քաղաքակրթական մարտահրավերների ներազդեցությամբ ընթացավ աֆղանական հասարակաշինական գործընթացը՝ անհատի դերի՞, թե՞ խմբային/կլանային շահերի գերակայությամբ:
3. Ինչպե՞ս է Ս. Ռոկկանի «կենտրոն-ծայրամաս» տիպաբանության շրջանակում բացատրվում խորհրդային քաղաքականության ձախողումը Աֆղանստանում (միագլուխ խորհրդային մոդելի և ծայրահեղ բազմագլուխ աֆղանական հասարակության հարաբերությունը):
4. Ինչպե՞ս է աֆղանական մարտական փորձառությունը («մարտական կապիտալը») նպաստել Արցախյան առաջին պատերազմում կամավորական ջոկատներից կանոնավոր բանակի անցմանը:

Գիտական նորույթը.

ա. Ատենախոսության հիմնական նորույթներից է Աֆղանստանի և աֆղանական ճգնաժամի, աֆղանական ինքնության և հասարակական-քաղաքական արդիականացման փորձառության ուսումնասիրությունը՝

պատմագիտության և այլ հասարակական գիտությունների միջգիտակարգային համադրությամբ: Աֆղանական պատերազմի և ինքնութենական ճգնաժամի խնդիրները քննարկված են բազմաշերտ և բազմաչափ ազդեցութենական գործընթացների՝ սառըպատերազմյան գործիքակազմին բնորոշ դրսևորումների և աֆղանական հակամարտության առանձնահատկությունների ենթախորքին:

բ. Աֆղանական պատերազմը ուսումնասիրված է որպես Սառը պատերազմի լոկալ հակամարտություն՝ աֆղանական հասարակության պատմական հետնախորքի («կենտրոն-ծայրամաս» օրինաչափություն, էթնիկական և կրոնական տարասեռություն) և գերտերությունների շահերի փոխկապակցվածության մեջ:

գ. Ս. Ռոկկանի «կենտրոն-ծայրամաս» տիպաբանությունը, որը մշակվել է եվրոպական նյութի հիման վրա, կիրառվել է Աֆղանստանում խորհրդային քաղաքականության վերլուծության համար որպես բացատրական շրջանակ՝ հաշվի առնելով եվրոպական պետությունների համար մշակված մոդելի փոխանցման պայմանականությունը ոչ եվրոպական, պատրիմոնիալ հասարակությանը: Ցույց է տրվում, որ աֆղանական հասարակությունը ծայրահեղ «բազմագլխության» (polycephalic) օրինակ է, որտեղ ռազմավարչական, տնտեսական և մշակութային կենտրոնների գործառույթները տեղայնացված են ըստ առանձին ծայրամասերի: Հենց այս առանձնահատկությունն էլ դժվարացնում էր խորհրդային միակենտրոն (monocephalic) կառավարման մոդելի ներդրումը:

դ. Արխիվային նյութերի, վետերանական կազմակերպությունների տվյալների և բաց աղբյուրների համադրմամբ ներկայացվել է Խորհրդային Հայաստանից Աֆղանական պատերազմին մասնակցության քանակական պատկերը (մոտ 4000 զինծառայող, այդ թվում՝ 400 սպա, 86 զոհ, մոտ 300 վիրավոր): Հ. Ուիլքինսոնի «մարտական կապիտալ» (combat capital) հայեցակարգը, որը մշակվել է Պ. Բուրդիեի դաշտի տեսության հիման վրա որպես ռազմական փորձի արժեքը քաղաքացիական դաշտում վերլուծելու գործիք, կիրառվել է աֆղանական պատերազմի մարտական փորձի՝ Արցախյան առաջին պատերազմում ռեսուրսի վերածվելը բացատրելու համար: Ցույց է տրվել, որ պետական ռազմական ինստիտուտների բացակայության պայմաններում մարտական կապիտալի փոխակերպումը (մարտական հմտություններ, հրամանատարական փորձ, «մարտական եղբայրության» ցանցեր) նպաստել է կամավորական ջոկատների և կանոնավոր բանակի ձևավորմանը:

Տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթներն ու նյութերը կարող են օգտագործվել Սառը պատերազմի պատմության, աֆղանագիտության, միջազգային հարաբերությունների և անվտանգության ուսումնասիրություններում, համապատասխան ուսումնական դասընթացների մշակման մեջ, Հայաստանի Հանրապետության կենտրոնասիական և իսլամական աշխարհի հետ հարաբերությունների վերլուծություններում, ինչպես նաև

Աֆղանական պատերազմի հայ մասնակիցների և հայկական ռազմական փորձառության պատմության հետագա ուսումնասիրության համար:

Ատենախոսության փորձքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են մեր թվով ութ գիտական հոդվածներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի պատմագրական ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսությունը գրված է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակված ***սկզբնաղբյուր***ների և ***գիտահետազոտական գրականության*** հիման վրա: 19-րդ դարից սկսած՝ Աֆղանստանին առնչվող տարբեր հիմնախնդիրներ դարձել են հետազոտության առարկա: Առավել մեծ հետաքրքրություն աֆղանագիտության նկատմամբ ձևավորվեց 20-րդ դարի երկրորդ կեսից, ինչը պայմանավորված էր այս երկրի նկատմամբ գերտերությունների հետաքրքրությունների աճով, իրար հաջորդող ռազմական հեղաշրջումներով և վերջապես, խորհրդային, ապա ԱՄՆ-ի և իր դաշնակիցների ռազմական ներկայությամբ: Ավելին, Աֆղանստանի և կենտրոնասիական տարածաշրջանի նկատմամբ հետազոտական հետաքրքրությունը մեծացավ համաշխարհային հանրույթի նկատմամբ գլոբալ սպառնալիքների՝ միջազգային ահաբեկչության և կրոնական ծայրահեղության տարածմանը զուգընթաց: Հարդյունս՝ աֆղանական ինքնությունը, հասարակական միջավայրը, տոհմացեղային ու քաղաքական ինստիտուտները, արտաքին ու ներքին ճնշումների նկատմամբ «իմունային հակազդեցությունը» դարձան առաջատար հետազոտական կենտրոնների ուսումնասիրության առարկա:

Ատենախոսության մեջ օգտագործվել են սահմանադրական ակտեր, ՄԱԿ-ի բանաձևեր, արխիվային նյութեր, հուշագրություններ, հրամանագրեր, պաշտոնական ելույթներ: Որպես սկզբնաղբյուր՝ օգտագործվել են նաև Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի՝ պատերազմին հայերի մասնակցության արխիվային գործերը[1], որոնցում տեղայնացված տարբերակով ներկայացվում են Խորհրդային Հայաստանի տարբեր շրջաններից զորակոչվածների, զոհվածների, հաշմանդամների և պարգևատրվածների ցուցակները:

Աֆղանական հասարակության զարգացման հեռանկարների տեսանկյունից աղբյուրագիտական նշանակություն ունեն երկրի Սահմանադրությունները[2]: Քանի

---

[1] ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 29, գ. 27, թ. 16, 49; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 7, գ. 56, թ. 2; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 7, գ. 25, թ. 38-43; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 32, գ. 23, թ. 97-100; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 42, գ. 6, թ. 222, 266: ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 22, գ. 38, թ. 70, 114, 116-117, 123; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 6, գ. 18, թ. 1; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 35, գ. 15, թ. 6, 19, 24; ***ՀԱԱ***, Ֆ. 328, ց. 40, գ. 61, թ. 41:

[2] ***Constitution of Afghanistan 1964***, https://www.constituteproject.org/constitution/Afghanistan_1964.pdf?lang=en, ***Afghanistan Constitution 1977***, https://constitutionnet.org/sites/default

որ դրանք արտացոլում են ընտրախավի հայտարարված նպատակները, ոչ թե իրական պրակտիկան, դրանք համադրվել են արխիվային, հուշագրական և այլ նյութերի հետ:

Գիտաթեմայի համար աղբյուրագիտական նշանակություն ունեն ԽՍՀՄ արտգործնախարարության հրապարակած պարբերական ժողովածուները[3], որտեղ ամփոփված են Խորհրդային Միության արտաքին քաղաքականության և միջազգային, միջպետական համաձայնագիր-ակտերը: Կարևորել ենք նաև ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի 1986-ին հրատարակված փաստաթղթերի ժողովածուն[4], որտեղ ներկայացված են 1977-1979 թվականների ԱՄՆ Պետդեպարտամենտի գաղտնի նամակագրությունները: Թեմայի համար աղբյուրագիտական նշանակություն ունեն ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից հրատարակված սառըպատերազմյան ժամանակաշրջանի արտաքին քաղաքականության փաստաթղթերի ժողովածուները («Foreign Relations of the United States»): Առանձնակի կարևորություն են ներկայացնում Աֆղանստանի և Հարավային Ասիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականությանը նվիրված ժողովածուները[5]: Արժեքավոր են ՄԱԿ-ի առցանց փաստաթղթերը, որոնք հնարավորություն են ընձեռում օգտվելու 1980-ականների «Իրավիճակը Աֆղանստանում և դրա հետևանքները միջազգային խաղաղության և անվտանգության համար» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձևերից[6], քվեարկության արդյունքներից, այլ պաշտոնական փաստաթղթերից[7]:

/files/Afghanistan%20Constitution%201977.pdf (Հղված է 23.10.2022); ***Afghanistan's 1987 Constitution***, https://www.afghan-web.com/history/afghanistan-constitution-of-1987/ (Հղված է 21.11.2022)

[3] ***Внешняя политика Советского Союза и международные отношения. 1978 год: Сборник документов*** / Составители И. А. Кириллин, Н. Ф. Потапова. М.: Международные отношения, 1979. 264 с.

[4] ***Секретная переписка внешнеполитических ведомств США по Афганистану*** / под редакцией Ю. В. Ганковского. Спецбюллетень Института востоковедения АН СССР, № 5 (244). М.: Наука, 1986. 176 с.

[5] ***Foreign Relations of the United States.*** 1977–1980. Afghanistan. Volume XII. Washington: United States Government Publishing Office, 2018. 909 p. ***Foreign Relations of the United States***. 1977–1980. South Asia. Volume XIX. Washington: United States Government Printing Office, 2019. 1104 p.

[6] ***6th session - The situation in Afghanistan and its implications for international peace and security*** [Requested by the Security Council on 10-14 January 1980, https://www.un.org/en/ga/sessions/emergency.shtml ; ***A/37/482***, 1982 թ-ի սեպտեմբերի 27, Գլխավոր քարտուղարի զեկույցը, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N82/256/04/PDF/N8225604.pdf?OpenElement; ***A/38/449***, 1982 թ-ի սեպտեմբերի 28, Գլխավոր քարտուղարի զեկույցը, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/GL0/214/25/PDF/GL021425.pdf?OpenElement ***A/40/709***, 1985 թ-ի հոկտեմբերի 3, Գլխավոր քարտուղարի զեկույցը, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/GL0/147/54/PDF/GL014754.pdf?OpenElement ; ***A/42/74***, 1987 թվականի հունվարի 6, ՄԱԿ-ում Աֆղանստանի մշտական ներկայացուցչի նամակը՝ ուղղված Գլխավոր քարտուղարին: https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/GL0/099/31/PDF/GL009931.pdf?OpenElement

[7] ***A/43/804***. Письмо Постоянного представителя Афганистана при ООН от 11 ноября 1988 г. на имя Генерального секретаря. Заявление, озаглавленное «Всеобъемлющие мирные инициативы», с которым

Աշխատանքի տեսական հիմքը կազմում է Ս. Ռոկկանի «կենտրոն–ծայրամաս» տիպաբանությունը[8], որը կիրառել ենք աֆղանական պետականության և խորհրդային քաղաքականության վերլուծության համար: Աշխարհաքաղաքական համատեքստը բացահայտելիս օգտվել ենք Ա. Մեհենի, Հ. Մաքինդերի և Ն. Սփայքմենի ուսումնասիրություններից[9], քաղաքակրթական առանձնահատկությունները դիտարկելիս՝ Ա. Թոյնբիի[10], իսկ գերտերությունների փոխհարաբերությունները՝ Թ. Շելինգի խաղերի տեսության շրջանակում[11]:

Հուշագրությունները[12] (Գրոմով և այլք) օգտագործվել են որպես սուբյեկտիվ վկայություն. հաշվի ենք առել դրանց ուշացած շարադրանքը և հեղինակների շահագրգռվածությունը, ուստի փաստացի տվյալները ստուգվել են արխիվային և պաշտոնական փաստաթղթերով:

Հետազոտվող հիմնախնդրի ուսումնասիրության համար օգտագործել ենք ***գիտական հետազոտություններ***, որոնք երբեմն մասնակի, երբեմն ամբողջականորեն անդրադարձել են՝ Աֆղանական պատերազմի քաղաքական և ռազմական, պետական և էթնիկական գործընթացներին և հասարակության արդիականացման փորձերի պատմությանը:

Այս առումով հատկանշելի են Բ. Ռուբինի, Լ. Փուլադայի, Հ. Կակարի և այլոց աշխատությունները[13]: Ի շարս դրանց՝ ցանկանում ենք առանձնացնել Վ. Գրեգորյանի «Ժամանակակից Աֆղանստանի առաջացումը/The Emergence of

---

Президент Наджибулла выступил на совместной сессии палаты представителей и сената 29 октября 1988 г. https://undocs.org/ru/a/43/804

[8] ***Rokkan S.***, Centre-Formation, Nation-Building, and Cultural Diversity: Report on a UNESCO Programme //Building States and Nations. Models and Data Resources. 1973. V. 1. P. 13-38; ***Rokkan S.***, Dimensions of State Formation and Nation-Building: A Possible Paradigm for Research on Variations within Europe // The Formation of National States in Western Europe / ed. by Charles Tilly. Princeton: Princeton University Press, 1975. P. 562-600; ***Роккан С.***, Центр-периферийная полярность //Политическая наука. 2006, №. 4, с. 73-101.

[9] ***Mahan A. T.***, The Influence of Sea Power Upon History, 1660-1783. Little, Brown & Co. Boston, 1890. Repr. of 5th ed., Dover Publications, N. Y., 1987; ***Turner F. J.***, The frontier in American history. – Courier Corporation, 2010; ***Mackinder H. J.***, The geographical pivot of history // Geographical Journal. 1904. Vol. 23. N 4. P. 421–437; ***Mackinder H. J.***, Democratic ideals and reality: a study in the politics of reconstruction. Washington, 1996. P. XXIII; ***Spykman N. J.***, America's strategy in world politi cs: the United States and the balance of power. N.Y., 1942; ***Spykman N. J.***, Geography and foreign policy I // The American Political Science Review. 1938. Vol. 32, N 1.

[10] ***Тойнби А. Дж.***, Цивилизация перед судом истории /пер. с англ. М.: Прогресс–Культура, 1996.

[11] ***Schelling T. C.***, Strategy of Conflict. Cambridge (Mass.): Harvard University Press, 1960.

[12] ***Громов Б. В.***, Ограниченный контингент, М.: Прогресс, 1994.

[13] ***Rubin B.***, The fragmentation of Afghanistan: State formation and collapse in the international system. New Haven, CT: Yale University Press. 1995; ***Poullada L.B.***, Reform and Rebellion In Afghanistan, 1919-1929, Ithaca: Cornell University Press, 1973***; Wyatt C. M.*** Afghanistan and the Defence of Empire: Diplomacy and Strategy during The Great Game. I.B.Tauris, 2011; ***Lee J. L.***, Afghanistan: A History from 1260 to the Present. Reaktion Books, 2019.

Barfield T. Afghanistan: A Cultural and Political History. Princeton: Princeton University Press, 2010; ***Ferrier J. P.***, History of the Afghans, London, 1858.

Modern Afghanistan»[14] աշխատությունը: Դրանում 1880-1946 թթ. Աֆղանստանի պատմությունը ենթարկվել է համակողմանի հետազոտության՝ ընդգրկելով երկրի քաղաքական, հասարակական և մշակութային կյանքի առանձնահատկությունները, մեծ տերությունների վարած քաղաքականությունն ու արդիականացման հրամայականները:

Սառը պատերազմի աշխարհաքաղաքական գործընթացների, Աֆղանստանի աշխարհաքաղաքական նշանակության, էթնիկական խճանկարի, իսլամի և իսլամիստական շարժումների, պատերազմի և դիվանագիտության ուսումնասիրության համար օգտագործել ենք արևմտյան և ռուսաստանյան հեղինակների աշխատությունները, որոնցից կարևորում ենք Ջ. Մյուլերի, Ջ. Գրենվիլի, Պ. Բիրգենի, Լ. Դյուպրիի, Ա. Ա. Կնյազևի, Կ. Արմսթրոնգի, Յու. Պ. Լալետինի հետազոտությունները[15]:

Նշենք, որ հայ պատմագրության մեջ աֆղանական թեման հիմնականում ուսումնասիրվել է անվտանգային տեսանկյունից: Հայ մասնակիցների փորձառությունը համակարգված չի ուսումնասիրվել: Բացառություն են Հ. Քոթանջյանի ուսումնասիրությունները[16], որոնք, սկսած 1990-ական թվականներից, տպագրվել են «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից առաջինը՝ չորս, երկրորդը՝ ութ, երրորդը՝ ութ ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության մատենագիտական ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 150 էջ:

---

[14] ***Gregorian V.***, The Emergence of Modern Afghanistan, California: Stanford University Press, 1969.

[15] ***Muller J.W.***, Churchill's "Iron Curtain" Speech Fifty Years Later, University of Missouri Press, 1999; ***Гренвилл Дж.*** История XX века. Люди. События. Факты/ Пер. с англ. О.Суворов. М.: «Аквариум», 1999; ***Florinsky M.T.***, Integrated Europe, New York: Macmillan Co, 1955; ***Bergen P.,*** *Holy War Inc.*, Free Press, 2001; ***Dupree L.,*** Afghanistan. 2nd ed. Princeton, NJ: Princeton University Press. 1980; ***Roy O.,*** Islam and Resistance in Afghanistan. Cambridge University Press, 1990; ***Армстронг К.***, Битва за Бога. История фундаментализма, М., 2013; ***Лалетин Ю. П.***, Политсистема Афганистана как идеальный тип: воздействие племён // Государство и племя, М., 2008.

[16] ***Քոթանջյան Հ. Ս.***, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Երևան, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, 764 էջ: ***Քոթանջյան Հ. Ս.***, Սրբազան պատերազմի ազգաքաղաքականությունը Աֆղանստանի օրինակով, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1995, N 4, 18-31 էջեր: ***Քոթանջյան Հ. Ս.***, Մոջահեդի բարոյահոգեբանական արժեքային կողմնորոշման հարցի շուրջ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1996, N 1, 36-63 էջեր: ***Քոթանջյան Հ. Ս.***, Ռազմաքաղաքագիտական դաշտային հետազոտությունների գործիքակազմի մասին (Աֆղանական պատերազմի փորձից), «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1996, N 2, 26-45 էջեր:

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, մեթոդաբանական հիմքերը, աղբյուրագիտական բազան և հիմնահարցի պատմագրական ուսումնասիրվածության աստիճանը: Սահմանվել են աշխատանքի գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «***Աֆղանստանը 19-20-րդ դարերում (պատմություն, սոցիալական կառուցվածք, կրոն)»,*** ուսումնասիրվել են Աֆղանստանի պատմական զարգացման հիմնական փուլերը, պետականության ձևավորման գործընթացը, երկրի սոցիալական և էթնոկրոնական կառուցվածքի առանձնահատկությունները:

Առաջին՝ «***Կենտրոնացված պետության ձևավորումը***» ենթագլխում ուսումնասիրվել են Աֆղանստանի պետականության ձևավորման պատմական գործընթացները, կենտրոնացված իշխանության հաստատման փորձերը և երկրի քաղաքական համակարգի զարգացման առանձնահատկությունները:

Երկրորդ՝ «***Աֆղանստանը 20-րդ դարի առաջին կեսին. արդիականացման քաղաքականությունը***» ենթագլխում ներկայացվել են 20-րդ դարի առաջին կեսին Աֆղանստանում իրականացված քաղաքական և հասարակական վերափոխումները: Այս համատեքստում ուշադրություն է դարձվել Ամանուլլա խանի կառավարման շրջանին, նրա նախաձեռնած բարեփոխումներին, դրանց նպատակներին և հասարակական արձագանքին, ինչպես նաև ուսումնասիրվել են երկրի արդիականացման փորձերը, պետական կառավարման համակարգի վերափոխման, կրթության, հասարակական հարաբերությունների և արտաքին քաղաքականության զարգացման ուղղությունները: Անդրադարձ է կատարվել նաև Ամանուլլա խանի գահընկեցությունից հետո երկրում հաստատված քաղաքական իրադրությանը, Մ. Նադիր շահի և Մ. Զահիր շահի կառավարման ժամանակաշրջաններին:

Երրորդ՝ «***Աֆղանստանի էթնիկական համապատկերը***» ենթագլխում ուսումնասիրվել է Աֆղանստանի բազմազգ հասարակության ձևավորումն ու էթնիկական կազմի առանձնահատկությունները: Ներկայացվել են երկրի հիմնական էթնիկ խմբերը՝ փուշթունները, տաջիկները, հազարաները, ուզբեկները և այլ ժողովուրդներ, նրանց բնակության տարածքները, լեզվական ու մշակութային առանձնահատկությունները: Պետք է նշել, որ ուշադրություն է դարձվել նաև էթնիկական պատկանելության և քաղաքական ինքնության փոխհարաբերություններին, ցեղային ու համայնքային կառույցների ազդեցությանը հասարակական կյանքի վրա:

Չորրորդ՝ «***Աֆղանստանի կրոնական համապատկերը. իսլամը և արմատական շարժումները***» ենթագլխում կարևորվել է իսլամի դերը Աֆղանստանի հասարակական և քաղաքական կյանքում: Ներկայացվել են իսլամի տարածման պատմական հանգամանքները, կրոնական հաստատությունների և հոգևորականության ազդեցությունը հասարակական

հարաբերությունների վրա: Ենթագլխում բովանդակային քննության է ենթարկված կրոնական գործոնի նշանակությունը երկրի քաղաքական գործընթացներում, ինչպես նաև իսլամական արժեքների ու ավանդույթների ազդեցությունը պետական կառավարման և հասարակական կազմակերպման վրա, կրոնական ինքնության և ցեղային-համայնքային հարաբերությունների փոխկապակցվածությանը:

Երկրորդ գլխում՝ ***«Սառը պատերազմը. ծավալապաշտություն և դիմակայություն (աֆղանական հարացույցը)»,*** Աֆղանստանը և աֆղանական հասարակությունը դիտարկված են Սառը պատերազմի աշխարհաքաղաքական մրցակցության և միջազգային հարաբերությունների զարգացումների համատեքստում՝ շեշտադրելով երկրի ռազմավարական նշանակությունը և գերտերությունների արտաքին քաղաքական շահերը:

Այս գլխում ուսումնասիրվել են Խորհրդային Միության արտաքին քաղաքականության գաղափարական և ռազմավարական հիմքերը, դրանց իրականացման հիմնական գործիքակազմը և զարգացող երկրների, մասնավորապես՝ Երրորդ աշխարհի պետությունների նկատմամբ որդեգրված մոտեցումները, մասնավորապես Աֆղանստանի նկատմամբ խորհրդային քաղաքականության ձևավորմանն ու զարգացմանը, խորհրդա-աֆղանական հարաբերությունների առանձնահատկություններին և այդ հարաբերություններում քաղաքական, տնտեսական, կրթամշակութային ու ռազմաքաղաքական գործոնների փոխազդեցությանը:

Առաջին՝ «***ԱՄՆ-ը և Սառը պատերազմը***» ենթագլխում վերլուծվում է Սառը պատերազմի շրջանում ԱՄՆ արտաքին քաղաքական ռազմավարությունը՝ ի մասնավորի Թրումանի հայեցակարգը, Մարշալի պլանը, ՆԱՏՕ-ի ստեղծումը և տարածաշրջանային ռազմաքաղաքական դաշինքների ձևավորումը: Ինչպես ցույց է տրվում՝ ամերիկյան արտաքին քաղաքականության հիմքում ընկած էին ԽՍՀՄ-ի ազդեցության զսպման, դաշնակիցների համախմբման և միջազգային համակարգում ԱՄՆ-ի գերակա դիրքի ամրապնդման նպատակները: Միաժամանակ դիտարկվում է Նիքսոնի վարչակազմի՝ ԽՍՀՄ-ի և Չինաստանի հետ հարաբերություններում համագործակցության հնարավորություններն ընդլայնելու քաղաքականությունը՝ առանց «Երրորդ աշխարհում» գերտերությունների մրցակցությունը դադարեցնելու:

Երկրորդ՝ «***ԽՍՀՄ-ը և Սառը պատերազմը***» ենթագլխում ներկայացվում են ԽՍՀՄ-ի աշխարհաքաղաքական և գաղափարախոսական նպատակները Սառը պատերազմի ձևավորման ու զարգացման համատեքստում: Վերլուծվում է սոցիալիստական ճամբարի ձևավորման և ընդլայնման գործընթացը, որի արդյունքում 1955 թվականին ստեղծվեց Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը, որը խորհրդային ղեկավարության կողմից դիտարկվում էր որպես ՆԱՏՕ-ի հակակշիռ: Վերոնշյալ հիմնախնդիրների ուսումնասիրման համար բովանդակային քննության ենք ենթարկել նաև սոցիալիստական

ճամբարի ներսում առաջացած հակասությունները և Արևելյան Եվրոպայի երկրներում հակախորհրդային ելույթների ճնշման օրինակները, ինչպես նաև խորհրդային համակարգի գաղափարախոսական հավակնությունների և դրա իրական քաղաքական գործելակերպի միջև առկա հակասությունը:

Երրորդ՝ «***Խորհրդա–ամերիկյան հակամարտությունը պատմաքաղաքագիտական մտքի ծիրում***» ենթագլխում դիտարկվում են Սառը պատերազմի բնույթի և խորհրդա-ամերիկյան հակամարտության վերաբերյալ արևմտյան և խորհրդային պատմագիտական մտքի տարբեր գնահատականները: Համադրվում են հակամարտության մեկնաբանման տարբեր պատմագիտական մոտեցումները՝ հաճախ կարևորելով դրանց գաղափարական և քաղաքական պայմանավորվածությունները:

Չորրորդ՝ «***Խորհրդային կառավարող վերնախավի մտակեցվածքը***» ենթագլխում վերլուծվում են խորհրդային կառավարող վերնախավի աշխարհայացքային պատկերացումները, քաղաքական մտածողության կարծրատիպերը և դրանց ազդեցությունը արտաքին քաղաքական որոշումների ընդունման վրա: Առանձնացվում են Լ. Բրեժնևի ժամանակաշրջանից մինչև վերակառուցման տարիները պահպանված գաղափարական իներցիան, հակառակորդի հնարավորությունների թերագնահատումը և սեփական ուժերի գերագնահատումը:

Հինգերորդ՝ «***Խորհրդային արտաքին քաղաքականությունը. ռազմավարություն և գործիքակազմ***» ենթագլխում ուսումնասիրվում են Խորհրդային Միության արտաքին քաղաքականության գաղափարախոսական հիմքերը, ռազմավարական նպատակներն ու դրանց իրականացման գործիքները: Վերլուծվում են խորհրդային արտաքին քաղաքականության դասակարգային բնույթը և դրա ձևավորման պատմական ակունքները, ինչպես նաև կոմունիստական գաղափարախոսության տարածման՝ քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և ռազմական միջոցները:

Վեցերորդ՝ «***Երրորդ աշխարհի վերափոխման խորհրդային մոդելը և Աֆղանստանը***» ենթագլխում քննության են առնվում ԽՍՀՄ-ի կողմից զարգացող երկրների համար մշակված սոցիալիստական վերափոխման մոդելը և դրա կիրառման առանձնահատկությունները, «վերևից հեղափոխության» գաղափարը, որի հիմքում ընկած էր կենտրոնացված պետական իշխանության միջոցով հասարակական, քաղաքական և տնտեսական համակարգերի վերափոխումը: Այս համատեքստում անդրադարձել ենք Սթեյն Ռոկկանի կենտրոն–ծայրամաս հարաբերությունների տեսությանը, մասնավորապես՝ քաղաքական տարածքի կենտրոնացման և պետական իշխանության ներթափանցման տարբեր դրսևորումներին: Ռոկկանի տեսական մոտեցման միջոցով բացահայտվում է խորհրդային՝ կենտրոնացված և միակենտրոն կառավարման մոդելի ու աֆղանական հասարակության բազմակենտրոն, տոհմացեղային և տեղական ինքնակազմակերպման վրա հիմնված կառուցվածքի միջև առկա հակասությունը:

Յոթերորդ՝ «***Աֆղանստանը՝ աշխարհաքաղաքական հանգույց***» ենթագլխում խոսվում է Աֆղանստանի աշխարհաքաղաքական նշանակության մասին՝ որպես Հարավային ու Կենտրոնական Ասիան, ինչպես նաև տարածաշրջանային ու համաշխարհային տերություններին իրար կապող կամուրջ: Այստեղ անդրադառնում ենք Աֆղանստանի աշխարհագրական դիրքի մասին տարբեր աշխարհաքաղաքական տեսություններին, այդ թվում՝ Հարթլանդի և Ռիմլանդի հայեցակարգերին, ինչպես նաև Աֆղանստանի՝ որպես «արտաքին հայացքներ ունեցող ծայրամասի» բնութագրմանը:

Ութերորդ՝ «***Աֆղանստանի քաղաքական ինքնահայացքի փարակերպերը***» ենթագլխում քննարկվում են 1960-70-ական թվականներին Աֆղանստանի քաղաքական զարգացումները, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ծրագրերն ու զարգացման հեռանկարները: Կարծում ենք՝ Աֆղանստանում կուսակցաշինության փորձի ուսումնասիրությունն արդիական է: Ենթագլխում ներկայացվում են քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմությունը, նրանց աջակիցների սոցիալական կազմը, ծրագրերն ու նպատակները, ԱԺԴԿ-ի ներսում «Փարչամ» և «Խալք» թևերի հակասությունները, խորհրդային ազդեցությունը և կուսակցության՝ երկրի քաղաքական կյանքում ունեցած դերին:

Երրորդ գլխում՝ ***«Աֆղանական պատերազմը (1979-1989 թթ.)»***, պատերազմը ներկայացվում է ոչ թե ռազմական գործողությունների մանրամասն նկարագրության, այլ նախևառաջ դրա պատմաքաղաքական, աշխարհաքաղաքական և արժեբանական չափումների տեսանկյունից: Գլխում քննարկվում են պատերազմի առաջացման պատճառները, Խորհրդային Միության ռազմական միջամտությունն ու աֆղանական կառավարության վարած քաղաքականությունը, դիմադրության շարժման զարգացումն ու արտերկրից ստացած աջակցությունը, ինչպես նաև պատերազմի ավարտի և դրա պատմագրական գնահատման հետ կապված հարցերը:

Առաջին՝ «***Նախագահ Դաուդ խանի քաղաքական շրջադարձը և Սաուրյան հեղափոխությունը***» ենթագլխում ուսումնասիրվում են նախագահ Դաուդ խանի գլխավորած հանրապետական վարչակարգի տարիներին երկրի ներքին ու արտաքին քաղաքականության զարգացումները, ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների վատթարացումը և Աֆղանստանի՝ հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելու փորձերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում 1978 թվականի ապրիլյան Սաուրյան հեղափոխությանը, Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության իշխանության գալուն և կուսակցության «Փարչամ» ու «Խալք» թևերի միջև հակասություններին:

Երկրորդ՝ «***Խորհրդային ներխուժումը և ռազմական ներկայությունը***» ենթագլխում վերլուծվում են Աֆղանստան խորհրդային զորքերի մուտքի քաղաքական և ռազմավարական նախադրյալները, Կրեմլի որոշումների կայացման գործընթացը և 1979 թվականի դեկտեմբերյան իրադարձությունները:

Ներկայացվում են «Շտորմ-333» գործողությունը, Ամինի վարչակարգի տապալումը և Բաբրաք Քարմալի իշխանության բերումը: Մյուս կողմից անդրադարձել ենք խորհրդային ռազմական ներկայության ծավալներին, դրա նպատակներին ու գործառույթներին, ինչպես նաև միջազգային արձագանքին և պատերազմի հետագա ընթացքի վրա դրա ազդեցությանը:

Երրորդ՝ «***Կոմունիստական վարչակարգի սոցիալական քաղաքականությունը***» ենթագլխում ուսումնասիրվում են Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության իշխանության տարիներին իրականացված սոցիալ-տնտեսական և հասարակական վերափոխումները. հողային, կրթական, իրավական և սոցիալական բարեփոխումները, դրանց գաղափարական հիմքերը և գործնական արդյունքները:

Չորրորդ՝ «***Աֆղանական ընդդիմությունը (մոջահեդներ) և իսլամական աշխարհը***» ենթագլխում ներկայացվում են խորհրդային ներկայության և կոմունիստական վարչակարգի քաղաքականության դեմ ձևավորված աֆղանական ընդդիմադիր շարժման առաջացման պատճառները, գաղափարական ուղղությունները և կազմակերպական կառուցվածքը: Փորձել ենք ներկայացնել նաև մոջահեդական հիմնական խմբավորումների առանձնահատկությունները, նրանց քաղաքական ու կրոնական նպատակները, ինչպես նաև միմյանց հետ ունեցած հարաբերությունները: Հատուկ ուշադրություն ենք դարձրել այն հանգամանքին, որ դիմադրության շարժումը միասնական քաղաքական ուժ չէր. տարբեր խմբավորումներ հաճախ ունեին սեփական պատկերացումները Աֆղանստանի ապագայի վերաբերյալ, ինչը և՛ համագործակցության, և՛ հակասությունների տեղիք էր տալիս: Առանձին դիտարկել ենք իսլամական աշխարհի աջակցությունը և դրա դերը շարժման կազմակերպման ու հետագա զարգացման գործում:

Հինգերորդ՝ «***ԱՄՆ-ի և արևմտյան դաշնակիցների օժանդակությունը հակախորհրդային պատերազմում***» ենթագլխում քննության է առնվում Աֆղանական պատերազմում ԱՄՆ-ի և նրա արևմտյան դաշնակիցների քաղաքական, ֆինանսական ու ռազմական աջակցությունը հակախորհրդային ուժերին: Պետք է նշել, որ արտաքին օժանդակությունը պայմանավորված էր ոչ միայն աֆղանական դիմադրությանն աջակցելու, այլև տարածաշրջանում խորհրդային ազդեցությունը սահմանափակելու ավելի լայն ռազմավարական նպատակներով: Կարևորել ենք Պակիստանի՝ որպես օժանդակության կազմակերպման և փոխանցման միջնորդի դերը:

Վեցերորդ՝ «***Ժնևյան համաձայնագրերը***» ենթագլխում ուսումնասիրվում են խորհրդա-աֆղանական պատերազմի ավարտի քաղաքական և դիվանագիտական նախադրյալները, ԽՍՀՄ արտաքին քաղաքականության վերանայումը և Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման որոշումը: Այս համատեքստում դիտարկել ենք 1988 թվականի ապրիլի 14-ին ստորագրված Ժնևյան համաձայնագրերը, դրանց հիմնական դրույթներն ու նշանակությունը:

Միաժամանակ փորձել ենք ցույց տալ, թե ինչ դեր ունեցան այդ համաձայնագրերը խորհրդային ռազմական ներկայության ավարտի և Աֆղանստանի հետագա քաղաքական զարգացումների համար: Անդրադարձել ենք նաև զորքերի դուրսբերման ընթացքին՝ այն դիտարկելով ոչ միայն որպես ռազմական գործողության ավարտ, այլև որպես ԽՍՀՄ արտաքին քաղաքականության կարևոր շրջադարձ:

Յոթերորդ՝ «***Հայերի մասնակցությունն Աֆղանական պատերազմին. ծառայություն և ռազմական փորձառություն***» ենթագլխում ներկայացվում է ԽՍՀՄ զինված ուժերի կազմում Աֆղանական պատերազմին հայ զինծառայողների մասնակցությունը: Որպես այդիպիսին՝ քննության են առնվում նրանց թվաքանակը, ծառայության առանձնահատկությունները, ռազմական տարբեր ստորաբաժանումներում ներգրավվածությունը, զոհերն ու մարտական կորուստները: Սակայն մեր ուսումնասիրության շրջանակը չի սահմանափակվել միայն մասնակցության փաստի և կորուստների արձանագրմամբ: Առանձնահատուկ կարևորել ենք պատերազմի ընթացքում հայ զինծառայողների ձեռք բերած ռազմական փորձառությունը՝ դիտարկելով այն որպես հետագա ռազմական և պատմական գործընթացներում որոշակի նշանակություն ունեցող ***մարտական կապիտալ***: Այս տեսանկյունից հայերի մասնակցությունը հնարավորություն է տալիս Աֆղանական պատերազմի պատմությունը դիտարկել նաև հայկական ռազմական փորձառության ձևավորման և կուտակման համատեքստում:

Ութերորդ՝ «***Աֆղանական պատերազմը պատմագրության լույսով***» ենթագլխում պատմագիտական քննության ենք ենթարկում Աֆղանական պատերազմի պատմագրական ընկալման և գնահատման զարգացումը, խորհրդային և հետխորհրդային, արևմտյան և աֆղանական հետազոտական մոտեցումները: Միաժամանակ անդրադարձել ենք այն տեսական դիտարկումներին, որոնց միջոցով հնարավոր է ավելի լայն համատեքստում հասկանալ աֆղանական հասարակության ներքին առանձնահատկությունների և արտաքին միջամտության փոխազդեցությունը:

Եզրակացություններ՝

- ***1979–1989 թթ. Աֆղանական պատերազմը Սառը պատերազմի կարևորագույն լոկալ հակամարտություններից էր***, որտեղ միահյուսվեցին գերտերությունների աշխարհաքաղաքական շահերը, գաղափարական հակադրությունը, ռազմական մրցակցությունն ու տարածաշրջանային դերակատարների ազդեցության ձգտումները: Միաժամանակ այն դարձավ աֆղանական հասարակության ներքին դիմադրության և արտաքին միջամտության բախման դրսևորում:
- ***Աֆղանստանի քաղաքական զարգացման առանձնահատկությունները պայմանավորված էին կենտրոնական իշխանության և ավանդական հասարակական կառույցների հակասությամբ:***

Պետական միավորման ու արդիականացման փորձերը պարբերաբար բախվում էին տոհմացեղային, կրոնական և տեղական ինքնակազմակերպման դիմադրությանը: Այս պատմական օրինաչափությունը կարևոր նախադրյալ դարձավ 1970-ական թվականների քաղաքական ճգնաժամի և հետագա պատերազմի համար: Աֆղանական պետության քաղաքական լանդշաֆտի տարասեռությունը պայմանավորված է ոչ միայն էթնիկ կազմով, աշխարհագրությամբ, տոհմացեղային կառույցներով և կրոնական (սուննի-շիա) բաժանումով, այլև իսլամական արմատական շարժումների տարածմամբ: Այս տարասեռությունը դարձավ թե՛ արտաքին միջամտության պատճառ, թե՛ դիմադրության հիմք:

- ***Երկրորդ աշխարհամարտից հետո Աֆղանստանը դարձավ խորհրդային և ամերիկյան մրցակցության կարևոր ուղղություններից մեկը:*** Չնայած արտաքին օգնության բազմակողմանիությանը՝ երկրի ղեկավարությունը ձգտում էր պահպանել հավասարակշռված արտաքին քաղաքականություն, սակայն Զահիր շահի վարչակարգը (1933-1973 թթ.) թեքվեց դեպի Խորհրդային Միության կողմը, որը պատրաստ էր երկրին ցուցաբերելու համակողմանի տնտեսական և ռազմաքաղաքական օժանդակություն: 1950-ականներից թափ առած համագործակցությունը հնարավորություն տվեց Զահիրին շարունակելու չափավոր և աստիճանական արևմտականացման կուրսը: Դրա բարձրակետը դարձավ 1964 թվականի Սահմանադրությունը, որը հաստատում էր *սահմանադրական միապետություն*՝ քաղաքացիական իրավունքներով, երկպալատյա խորհրդարանով, հաշվետու կառավարությամբ, միապետի իշխանության սահմանափակմամբ: Ստեղծված համեմատաբար ազատ միջավայրում առաջացան երեք հիմնական հոսանքներ՝ ձախ-խորհրդամետ (ԱԺԴԿ՝ հիմնադրվել է 1965 թ.), իսլամիստական (Մուսուլման երիտասարդների կազմակերպություն, այնուհետև «Ջամիաթ-ի իսլամի» և «Հիզբ-ի իսլամի») և ազգայնական-հանրապետական: Դրանցից և ոչ մեկը չհենվեց ծայրամասի լայն զանգվածների վրա, իսկ կուսակցությունների գործունեությունը օրենսդրորեն չկարգավորվեց, ինչը նրանց թողեց կիսաօրինական դաշտում:

- Աֆղանստանի արդիականացման գործընթացը նոր խթան ստացավ Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ սկսեց ծավալվել Սառը պատերազմը: ***Խորհրդային արտաքին քաղաքականության հիմքում ընկած «վերևից հեղափոխության» մոդելը չհամապատասխանեց աֆղանական հասարակության պատմական և սոցիալ-քաղաքական առանձնահատկություններին:*** ԽՍՀՄ-ի կողմից տնտեսական ու ռազմատեխնիկական օգնության, քաղաքական ազդեցության և վերջնականապես ռազմական ուժի կիրառման միջոցով խորհրդային համակարգի հաստատման փորձը չհանգեցրեց կայուն պետական վերափոխման:

- 1950-ականներից սկսած Աֆղանստանում ընթանում էր խորհրդային և ամերիկյան տնտեսական ու քաղաքական մրցակցություն: Աֆղանստանի

աշխարհաքաղաքական կարևորությունը պայմանավորված էր նրա դիրքով Կենտրոնական և Հարավային Ասիայի հատման կետում՝ ԽՍՀՄ հարավային սահմանի անմիջական հարևանությամբ, ինչն էլ այն դարձրեց գերտերությունների մրցավազքի թատերաբեմ: Արտաքին ֆինանսական, տնտեսական ներդրումներին զուգընթաց Աֆղանստանը ձգտում էր հավասարակշռության (bitaraf), բայց կախվածությունը խորհրդային օգնությունից աստիճանաբար մեծացավ:

- 1970-ականներին ***ծայրամասի անուս զանգվածը*** կրկին դժգոհության ալիք բարձրացրեց: Հավանաբար ուղղորդվում էր այն ուժերի կողմից, որոնք երկյուղում էին երկրում խորհրդային ազդեցության զորացումից: 1973 թվականին նախկին վարչապետ Դաուդ խանը, ապավինելով սպայության (այդ թվում՝ ձախ-խորհրդամետ խմբերի) աջակցությանը, տապալեց Զահիր շահի միապետությունը և Աֆղանստանը հռչակեց հանրապետություն: Սակայն հանրապետական ձևի ներքո նա ամրապնդեց անձնական իշխանությունը. 1977 թվականի Սահմանադրությամբ հաստատվեց միակուսակցական համակարգ, սահմանափակվեցին քաղաքական ազատությունները, խորհրդարանը դարձավ նախագահին հաշվետու, իսկ ընդունված օրենքները հաշվի չէին առնում ծայրամասի շահերը: ***1978 թվականի Սաուրյան հեղափոխությունը և դրան հաջորդած արմատական բարեփոխումները խորացրին Աֆղանստանի ներքաղաքական ճգնաժամը:*** ԱԺԴԿ-ի ներսում իշխանական պայքարը, վարչակարգի բռնաճնշումները և ավանդական հասարակության դիմադրությունը թուլացրին նոր իշխանության լեգիտիմությունը՝ նպաստելով զինված ընդդիմության ձևավորմանն ու տարածմանը:

- ***1979 թվականի դեկտեմբերին խորհրդային զորքերի մուտքը Աֆղանստան հակամարտությունը վերածեց Սառը պատերազմի գլոբալ դիմակայության կարևոր կիզակետի:*** Խորհրդային միջամտությունը ոչ միայն փոխեց տարածաշրջանի ուժային հավասարակշռությունը, այլև խորացրեց երկրի ներքին պառակտվածությունը՝ երկարատև պատերազմի մեջ ներքաշելով ինչպես Աֆղանստանը, այնպես էլ միջազգային մի շարք դերակատարների: Սկսվեց տասնամյա պատերազմը, որն անցավ չորս շրջափուլով (1979-1980, 1980-1981, 1982-1985, 1986-1989)՝ մարդկային և նյութական հսկայական կորուստներ պատճառելով կողմերին: Հ. Ամինի տապալումից և սպանությունից հետո խորհրդային ղեկավարությունը իշխանության բերեց ավելի հնազանդ և կանխատեսելի վարչակազմ՝ Բ. Քարմալի գլխավորությամբ: Իշխանությունը զիջումների միջոցով փորձում էր թուլացնել ընդդիմությանը՝ միաժամանակ պահպանելով իշխող կուսակցության առաջատար դերը: Այս միտումն ավելի շեշտադրվեց կոմունիստական հաջորդ առաջնորդի՝ Մ. Նաջիբուլլահի կառավարման տարիներին (1986-1992 թթ.):

- ***Աֆղանական դիմադրության շարժումը բազմաշերտ էր և գաղափարական առումով տարասեռ:*** Չնայած տարբեր կազմակերպությունների

քաղաքական ու կրոնական նպատակների տարբերություններին՝ դրանք միավորվում էին խորհրդային ռազմական ներկայության և կոմունիստական վարչակարգի դեմ պայքարի շուրջ: Մոջահեդների նյութական և ռազմատեխնիկական միջազգային օժանդակությունը ներկայանում էր համակենտրոն շրջանների պարագծով. ***առաջին*** շարքում մոջահեդներն էին և արաբական կամավորական (հիմնականում արմատական իսլամիստական) ուժերը, ***երկրորդում*** Պակիստանը, ՉԺՀ-ն, Սաուդյան Արաբիան և որոշակիորեն Իրանը, որոնք զինում և մարզում էին ընդդիմադիրներին, ***երրորդում*** ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունը և անուղղակիորեն ՆԱՏՕ-ն, որոնք կառավարում էին այս համակարգը և տրամադրում ֆինանսներ, հետախուզական տվյալներ, հեռահար կապի միջոցներ ու զենք:

- ***Խորհրդային ռազմական և քաղաքական ռեսուրսները բավարար չեղան Աֆղանստանում կայուն վերահսկողություն հաստատելու համար:*** Գորբաչովյան վերակառուցման պայմաններում ԽՍՀՄ-ը վերանայեց իր քաղաքականությունը և ձեռնամուխ եղավ զորքերի դուրսբերմանը: 1988 թվականի Ժնևյան համաձայնագրերը իրավաքաղաքական հիմք ստեղծեցին այդ գործընթացի համար, սակայն չլուծեցին Աֆղանստանի ներքին հակամարտությունը, իսկ խորհրդային աջակցության դադարեցման հետևանքով 1992 թվականի տապալվեց Նաջիբուլլահի վարչակարգը:

Աֆղանական պատերազմի պատմագրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա գնահատականները երկար ժամանակ պայմանավորված էին քաղաքական և գաղափարախոսական մոտեցումներով: Ս. Ռոկկանի տիպաբանության տեսանկյունից խորհրդային քաղաքականության ձախողումը պայմանավորված էր միագլուխ (monocephalic) պետական մոդելը ծայրահեղ բազմագլուխ աֆղանական հասարակությանը պարտադրելու փորձով: Աֆղանական պատերազմը ոչ միայն գերտերությունների պրոքսի հակամարտություն էր, այլև կենտրոն-ծայրամաս բախում:

- ***Աֆղանական պատերազմի հետևանքները դրսևորվեցին նաև հայոց ռազմի պատմության մեջ:*** Աֆղանական պատերազմին Խորհրդային Հայաստանից մասնակցել է մոտ 4000 զինծառայող (400 սպա), զոհվել է 86-ը, վիրավորվել՝ մոտ 300-ը: Հ. Ուիլքինսոնի «մարտական կապիտալի» հայեցակարգի շրջանակում (Պ. Բուրդիեի դաշտի և կապիտալի ձևերի տեսության համատեքստում) հիմնավորվել է, որ աֆղանական փորձը՝ մարտական հմտությունները, հրամանատարական փորձը և «մարտական եղբայրության» ցանցերը, պետական ռազմական ինստիտուտների բացակայության պայմաններում վերածվեց Արցախյան առաջին պատերազմի ռեսուրսի: Պատերազմի փորձառությունը լրացրեց ինստիտուցիոնալ կարողությունների պակասը և դարձավ կապող օղակ կամավորական շարժման ու կազմավորվող կանոնավոր բանակի միջև:

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են հետևյալ հրապարակումներում

1. ***Պողոսյան Վ***., «Սառը պատերազմի» սկիզբը. աշխարհաքաղաքական շահեր և գործընթացներ (1940-ական թթ-ի երկրորդ կես - 1950-ական թթ. սկիզբ), «Պատմություն և քաղաքականություն» գիտավերլուծական հանդես, 2021, թիվ 4(15), 3-13 էջեր:
2. ***Պողոսյան Վ***., Իսլամական արմատական շարժումները Աֆղանստանում (19-20-րդ դարեր), Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Հ, 2021, 199-208 էջեր:
3. ***Պողոսյան Վ***., Աֆղանստանի էթնիկ համապատկերի առանձնահատկությունները, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, 2022, թիվ Է, 179-194 էջեր:
4. ***Պողոսյան Վ***., Աֆղանստանը 20-րդ դարի առաջին կեսին. քաղաքական և հասարակական արդիականացման հրամայականները, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու: «Լիմուշ» հրատարակչություն, 2022, 85-97 էջեր:
5. ***Պողոսյան Վ***., Աֆղանական հասարակության կերպափոխությունները XX դարում (էթնիկ և կանանց հիմնախնդիրները), ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2024, N 2 (47), 7-18 էջեր: https://doi.org/10.24234/scientific.v2i47.160
6. ***Погосян В.А***., Влияние холодной войны на состояние афганского общества. Россия и мир: научный диалог. 2024, N 1, с. 187-199. https://doi.org/10.53658/RW2024-4-1(11)-187-199
7. ***Պողոսյան Վ***., Հայերի մասնակցությունը Աֆղանական պատերազմին. ծառայություն և ռազմական փորձառություն, ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2026, N 2 (52), 121-139 էջեր: https://doi.org/10.24234/scientific.v3i53.399
8. ***Պողոսյան Վ***., «Աֆղանական սոցիալիզմի» խորհրդային մոդելը. հայեցակարգ, իրականացում և ձախողման պատճառներ, Регион и мир, 2026, № 5 (66), 35-42 էջեր: https://DOI:10.58587/18292437-2026.5-35

ПОГОСЯН ВЛАДИМИР АРМЕНОВИЧ

АФГАНСКАЯ ВОЙНА 1979–1989 ГГ. (ЛОКАЛЬНЫЙ ОЧАГ ГЛОБАЛЬНОЙ ХОЛОДНОЙ ВОЙНЫ)

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 7.00.02 «Всемирная история». Ереванский государственный университет, 2026.

Защита диссертации состоится 17 декабря 2026 г. в 14:30 на заседании Специализированного совета 069 «Всемирная история» КВОН РА, действующего при Историческом факультете ЕГУ. Адрес: 0025, Ереван, ул. Абовяна, 52.

РЕЗЮМЕ

Актуальность. В период холодной войны международные отношения перестали быть исключительно евроцентричными, и конкуренция между сверхдержавами сместилась в сторону «третьего мира». Афганская война 1979-1989 годов стала одним из крупнейших локальных конфликтов этой конкуренции.

Объект и предмет. Объектом исследования является Афганская война 1979-1989 годов как локальный конфликт холодной войны, а предметом исследования - международные и внутриполитические аспекты афганской войны.

Цель. Цель диссертации - как можно более всесторонне изучить особенности афганской войны как локального конфликта холодной войны, объяснить роль историко-структурных факторов афганского общества, взаимодействие сверхдержав и региональных сил в ходе конфликта и провал советской политики, а также прояснить трансформацию боевого опыта Афганистана.

Задачи: раскрыть этапы формирования и модернизации афганской государственности с XIX века до 1978 года, выявить роль этнической и религиозной неоднородности Афганистана во внешнеполитических и внутриполитических процессах и формировании исламских радикальных движений, представить формирование холодной войны и особенности биполярной системы, стратегии США и СССР, раскрыть геополитическое значение Афганистана, стратегические и тактические перспективы внешней политики СССР, причины Апрельской революции 1978 года (Саурской революции), особенности политики правительства НДП и влияние ввода советских войск и фактора военного присутствия на весь регион, представить ход войны (этапы, потери) и внешнеполитическую и внутриполитическую политику Афганистана при коммунистических режимах (Кармал, Наджибулла), состав афганской оппозиции (моджахеды) и источники внешней помощи, причины изменения советской

стратегии, содержание Женевских соглашений и советские последствия решения о выводе войск, а также применить С. В работе использована типология Роккана «центр-периферия» (с учетом ее европейского происхождения), объяснены причины провала советской политики, проанализированы количественные характеристики участия Советской Армении в афганской войне (призыв, потери) и опыт службы армянских солдат.

Методология. Использованы историко-критический, сравнительно-исторический и системный методы, междисциплинарный подход. Теоретическая основа - типология «центр - периферия» С. Роккана, теория полей П. Бурдьё и концепция «боевого капитала» Х. Уилкинсон.

Научная новизна. Типология Роккана «центр-периферия», разработанная на основе европейского материала, послужила объяснительной основой для анализа советской политики в Афганистане с учетом обусловленности переноса модели, разработанной для европейских государств, в неевропейское, патримониальное общество. Показано, что афганское общество является примером крайней «полицефалии», где функции стратегических, экономических и культурных центров локализованы на отдельных перифериях. На основе архивных материалов, данных ветеранских организаций и открытых источников представлена количественная картина участия Советской Армении в афганской войне (около 4000 военнослужащих, включая 400 офицеров, 86 погибших, около 300 раненых).

Структура. Диссертация состоит из введения, трёх глав (4, 8 и 8 параграфов), заключения и библиографии. Первая глава посвящена Афганистану в XIX–XX вв.; вторая - холодной войне и афганской парадигме; третья - Афганской войне 1979-1989 гг. и участию армян.

Основные выводы. Попытки централизации и модернизации неоднократно сталкивались с сопротивлением племенных, религиозных и местных структур. Советская модель «революции сверху» не соответствовала историческим и социально-политическим особенностям афганского общества. Ввод войск в декабре 1979 г. превратил внутренний кризис в точку глобального противостояния; война прошла четыре этапа (1979-1980, 1980-1981, 1982-1985, 1986-1989). Политика «национального примирения» не изменила позицию оппозиции, а Женевские соглашения 1988 г. создали правовую основу для вывода войск, но не разрешили внутреннего конфликта. В терминах Роккана провал советской политики объясняется попыткой навязать моноцефальную (одноцентровую) модель крайне полицефальному (многоцентровому) обществу. Боевой опыт армянских участников войны стал связующим звеном между добровольческим движением и формирующейся регулярной армией.

VLADIMIR ARMEN POGOSYAN

THE AFGHAN WAR, 1979–1989 (A LOCAL FOCAL POINT OF THE GLOBAL COLD WAR)

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences in the field of "World History" (specialty code 7.00.02). Yerevan State University, 2026.

The dissertation defense will take place on December 17, 2026, at 14:30, during a meeting of the Specialized Council 069 ("World History") of the HESC of the Republic of Armenia, held at the Faculty of History, YSU. Address: 52 Abovyan St., Yerevan 0025.

SUMMARY

Relevance. During the Cold War, international relations ceased to be exclusively Eurocentric, and the rivalry between the superpowers shifted to the "Third World." The Afghan War (1979–1989) was one of the largest local conflicts within this rivalry.

Object and subject. The object of this research is the Afghan War of 1979–1989, viewed as a local conflict of the Cold War, while the subject encompasses the international and domestic political dimensions of the Afghan War.

Aim. The objective of this dissertation is to conduct as comprehensive an analysis as possible of the specific characteristics of the Afghan War as a Cold War local conflict; to explain the role of historical and structural factors within Afghan society, as well as the interaction between superpowers and regional powers, both during the conflict and in the failure of Soviet policy; and to examine the transformation of the Afghan combat experience.

Tasks: To examine the stages of the formation and modernization of Afghan statehood from the 19th century to 1978; to analyze the role of Afghanistan's ethnic and religious heterogeneity in domestic and foreign political processes, as well as the emergence of radical Islamic movements; to outline the development of the Cold War and the characteristics of the bipolar system, along with the respective strategies of the United States and the USSR; to identify the geopolitical significance of Afghanistan and the strategic and tactical perspectives of Soviet foreign policy; to explore the causes of the April Revolution (Saur Revolution) of 1978, the policies of the PDPA (People's Democratic Party of Afghanistan) government, and the impact of the entry and military presence of Soviet troops on the entire region; to detail the course of the war (its phases and casualties) and the foreign and domestic policies of the communist regimes (under Karmal and Najibullah); and to examine the composition of the Afghan opposition (the Mujahideen); and the sources of external support, the reasons for the

shift in Soviet strategy, the content of the Geneva Accords, and the consequences of the decision to withdraw Soviet troops; furthermore, it applies S. Rokkan's "center-periphery" typology (while accounting for its European origins) to explain the reasons for the failure of Soviet policy, analyzes the quantitative aspects of participation in the Afghan War from Soviet Armenia (conscription, casualties), and examines the service experiences of Armenian military personnel.

Methodology. The study combines historical-critical, comparative-historical and systemic methods within an interdisciplinary approach. Its theoretical framework rests on S. Rokkan's centre–periphery typology, P. Bourdieu's field theory and H. Wilkinson's concept of "combat capital."

Scientific novelty. Rokkan's "center-periphery" typology-originally developed based on the European experience-is employed here as an explanatory framework for analyzing Soviet policy in Afghanistan, with due consideration for the caveats involved in applying a model designed for European states to a non-European, patrimonial society. It is demonstrated that Afghan society serves as an example of extreme "polycephalhg," where the functions of military-administrative, economic, and cultural centers are localized across distinct peripheral regions. By synthesizing archival materials, data from veterans' organizations, and open-source information, a quantitative overview of participation in the Afghan War from Soviet Armenia is presented (approximately 4,000 service members-including 400 officers-with 86 fatalities and about 300 wounded).

Structure. The dissertation consists of an introduction, three chapters (with four, eight and eight sections respectively), a conclusion and a bibliography. Chapter 1 deals with Afghanistan in the 19th and 20th centuries; Chapter 2 with the Cold War and the "Afghan paradigm"; Chapter 3 with the Afghan War of 1979–1989 and the participation of Armenians.

Main conclusions. Attempts at centralisation and modernisation repeatedly met resistance from tribal, religious and local structures. The Soviet model of "revolution from above" did not fit the historical and socio-political features of Afghan society. The deployment of troops in December 1979 turned an internal crisis into a focal point of global confrontation; the war passed through four phases (1979–1980, 1980–1981, 1982–1985, 1986–1989). The policy of "national reconciliation" did not change the opposition's stance, and the 1988 Geneva Accords provided a legal basis for withdrawal without resolving the internal conflict. In Rokkan's terms, the failure of Soviet policy is explained by the attempt to impose a monocephalic (single-centred) model on a highly polycephalic (multi-centred) society. The combat experience of Armenian participants became a link between the volunteer movement and the emerging regular army.

